



ՔԱՀԱՆԱՆ ՔԱՐՈԶԻԶ

«Քահանայք քո զգեցցին զարդարութիւն, և սուրբք քո ցնծալով ցնծասցեն»:

(Մաղթ. մկ.)

Քարոզչական գործը ինչպէս անցյալում, առաւել ևս այսօր քահանայի և ընդհանրապէս հայ հոգևորականի կյանքում կարևոր տեղ է բռնում: Քարոզելու և սովորեցնելու պատվերը Հիսուս Քրիստոսից է գալիս. «Գնացէք աշտուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս...: Ուսուցէք անոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ» (Մատթ. գլ. ԻԸ 19—20): Հին ուխտի մեծ մարգարեները մեծ քարոզիչներ էին, կրակոտ, բոցաշունչ առաջնորդներ, որոնք իրենց հետևից էին տանում խավարի մեջ խարխափող ամբոխին, ցույց էին տալիս իրական կյանքը, գալիքն ու լինելիքը:

Առաքյալները, իրենց անձնագոհ կյանքով սկիզբ դրեցին քրիստոնեական աշխարհաւեցողության, հենց միայն «Գործք առաքելոցը» նրանց քարոզչական կրանքի, քրիստոնեական ուսմունքի, ջատագովության լավագույն առիթաւայն է:

Ավետարանում Հիսուսի գործունեության 3 տարիները պայմանավորված են նրա քարոզչական աշխատանքի վառ օրինակներով, ժողովրդական իմաստուն առակների մեջբերումներով և նրանց ճշմարիտ ու իմաստալից մեկնաբանությամբ: Հիսուսի գրուցի մեջ աչքի է ընկնում պարզությունը, կոնկրետությունը, վարակիչ անմիջականությունը և փիլիսոփայական խորքը:

Նրա ամբողջ ասածների միջից մեր աչքի առջև իրականորեն կանգնում է մարդը իր

բոլոր հակասություններով, կյանքի և հասարակության նկատմամբ ունեցած իր բարդ փոխհարաբերությամբ: Վերցնենք նրա ամենապարզ առակներից մեկը՝ «Անառակ որդու» առակը, և վերլուծենք, տեսնենք, թե նա ինչպէս է մոտեցել կյանքին ու մարդկանց: Պարզ կենցաղային մի պատմություն է այն, ընտանեկան դրամա, որը եղել է և պիտի լինի, քանի կա մարդկությունը: Ավետարանի տողերը ժլատ են և հակիրճ, մեկ էջի մեջ տրված է ողբերգությամբ լեցուն մի սքանչելի պատմություն. «Հայր, մեղայ յերկինս և առաջի քո, ոչ ես եմ արժանի կոչիլ որդի քո», մեկ տողի մեջ զգում ես զղջացողի դողացող ձայնը, թափվող արցունքները, իսկ հարը կքոտող ծնկներով, անակնկալից խառնված վազում է որդուն բնդատաց, փաթաթվում է և «Անկա գալարանոցան նորա և համբուրեաց զնա»: Ինչպիսի մեծ մարդկային տառապանք կա այստեղ, որքան անքուն գիշերներ էր անցկացրել ծերունի հայրը, որքան լուռ աղօղակ էր քամվել նրա աչքերից, և հիմա հեկեկում էր նա ուրախությունից և մեծ տառապանքի միջից ծնվում էր մարդը, գտնվում էր կորուսալու: Որքան խոր հոգեբանություն կա, որքան խոհեր կան և որքան կրանքի հոգսեր այս անպաճույճ պատմության մեջ: Տառապանք, զոքում և մեռած մարդու իսկական հարություն, աւն կադաճող ամեն մեկը պիտի բացականչե՝ ահա կյանքը, ահա իսկական մեծ ու ճշմարիտ կյանքը:

Քրիստոս ինչպես իր ուսմունքը, իր ճշմարիտ վարդապետությունը կարողանում է ամրացնել մարդկանց գիտակցության մեջ, մարդկանց համար, հանուն մարդու փրկության:

Մարդասիրությունը այն առանցքն է, որի շուրջը ճյուղաված է Հիսուսի ամբողջ ուսմունքը:

Սեր մարդ էակի հանդեպ, իսկ սիրո ստորագծիները շատ են: Ծմարտությունը և հույսը, հավատն ու առաքինությունը, զղջումն ու տառապանքը, որտեղից ծնվում են սիրո պտուղները:

Քրիստոսի մեծ ուսմունքը ամենից առաջ մարդաբանությունն է:

Ավետարանը անկատար մարդու սրբազան ձգտումն է դեպի կատարելություն, որ է Աստված: «Արդ՝ եղբրոք դուք կատարեալք որպէս և հայրն ձեր երկնատր կատարեալ է» (Մատթ. գլ. հմբ. 17):

Սակայն հեշտ ու խաղաղ չէ այդ ճանապարհը, կան անկումներ և վերելք, քարքարոտ ու դժվարին ճանապարհ է ան, որքան հոգու կորույ է պետք, ինքնագոհաբերում, ինքնամոռացություն, որքան պետք է խելդել մեզդ հոխորտացող Եսդ, և որքան սեր, առաքինություն, որքան կարեկցանք ու հավատ և ազնիվ ներողամտություն է պետք, մեծ կատարելության հասնելու համար:

Քարոզչի նյութը

Ս. Գիրք և Ավետարան—ահա այն մըշտընցեմանան և անհատնում յուսր. որը բոլոր ժամանակների քարոզիչների համար եղել է անսպառելի նյութ:

Հին Կտակարանի մեծերի ուսանելի կենդանի կյանքն ու օրինակները, բայց քարոզիչը ամենից շատ պիտի պտտվի ս. Ավետարանի շուրջը, ապառել այն մի քանի տասնյակ կամ մի քանի հարյուր քարոզներով անհնարին է, նրա յուրաքանչյուր տողը կենդանի մատուցելու կյանքի հազարեռանգ գույներն ու մեկն է, բազմաթիվ երեսներն ու մեկը: Եվ ահա այդ նյութին պիտի մոտենալ անհատ, ինչպես ինքը Քրիստոս մոտենում էր Լուսնոհն և մարդուն, երկնքի առքաւորությունը փնտրելով հեղա մարդու մեջ: «Ձի ահա առքաւորսին Աստուծոյ ի ներքս ի ձեռ է» (Ղուկ. գլ. 17 հմբ. 20):

Բազի ս. Գրքից և Ավետարանից քարոզչի համար կան նաև այլ նյութեր, որոնք կապված են զանազան հանդիսությունների, տոների, դիմիսների, հարսանիքի, մկրտության կամ թաղման, ձեռնադրության և այլ առիթների հետ, և բոլոր դեպքերում բնականորեն պետք է ընտրել ս. Գրքից, այդպես առ քառորդ կլեռածվի բանասիրության: Քարոզիչ հոգևորականը լավ պետք է իմանա նաև հայոց ազգային կյանքը և պատմու-

թյունը, որը լիքն է ամենագրավիչ և հերոսական ուսանելի նյութերով: Ազգային եկեղեցական մեր բոլոր տոները լավագույն առիթն են քարոզիչների փայլուն ելույթների համար:

Ի՞նչ մեթոդներ և ի՞նչ կերպեր պետք են քարոզչին իր բարի և ազնիվ գործը գլուխ բերելու համար:

Նախ ամեն մի քարոզիչ հիմնալի պիտի գիտենա և տիրապետի ս. Գրքին և Ավետարանին:

Բայց Ավետարանի պատմությունները չոր ու ցամաք կրկնելը, առանց մեկնաբանության և առանց այսօրվա մարդու կյանքի հետ շաղկապելու, քարոզի իրադարձությունների մեջ մարդուն ցույց տալու և առանց նրա մեջ քարիի և գեղեցիկի սերմերը շաղ տալու, կլինի ոչ թե կենդանի խոսք, այլ չոր ու ցամաք կրկնություն և ընդօրինակություն ավետարանական դարձվածքների: Ոչ մի կերպ չպետք է հեռանալ բնաբանից, բոլոր մտքերը և դարձվածքները պիտի զան ամրացնելու և հաստատելու այն: Միանգամայն անթույլատրելի են եկեղեցու բնից քաղաքական և կուսակցական նեղ բնույթի ճառեր խոսելը, որոնք անհարիր են քարոզչի կրոնական ամբիոնին:

Քարոզիչ հոգևորականը նախ պետք է սքանչելի տիրապետի արդի հայերենին (արևելահայերեն կամ արևմտահայերեն), պետք է տիրապետի և հասկանա գրաբարը, այս առիթով պիտի շեշտել, որ լավ է մեքերումները կատարել գրաբար և ապա անմիջապես թարգմանել: Գրաբար մեքերումները մի տեսակ վավերականություն են մտնում քարոզչի բանավոր խոսքի մեջ, առավել արժեքավորելով ան:

Քարոզչին պետք է սահուն ոճ և լեզու, թվատություն ունեցող կամ կանաչ և թոթով լեզվով անձինք չպետք է քարձրանան ամբիոն:

Համառատաստիս խոսելու, ինչպես ասում են, համառճանության խնդիր է և մեծ հնքնախտաբանության, որտ միշտ չէ, որ հաջողությամբ է ստանկվում և հաճախ խոսողը տապալում է:

Նախօրոք ամբողջ քառորդ յոնիությունը արելու ունի իր լավ տղմը և թեոություններ: Լավ է, երբ քարոզիչը արտասանում է իր գրածը անգիր. առանց կարդալու, այս դեպքում ստեղծվում է իր և լսարանի միջև կենդանի կապ, խոսքը դառնում է անմիջական և կենդանի, իսկ եթե ես կարողում է գոածո և ան էլ միայր ու միահնչում, կտոմում է կենդանի կապ լսարանի հետ, դեմքի միմիկան, աչքերի կենդանի առտահատությունը չի երևում, չկա ձեռքի կենդանի շարժումը և խոսքը, հրաշալի խոսքը մեռնում է, չհապ-

նելով ունկնդիրներին: Ծառերն էլ իրենց գրածի սահմաններում միայն խոսելու պայմանով երբ բեմ են ելնում, աշխատում են մեկ առ մեկ հիշել գրածի տողերը, որը և առաջ է բերում կաշկանդվածություն, և կենդանի խոսքը դառնում է շրջանակված:

Կա մի այլ ձև, որը շատ-շատերի նախասիրած ձևերից է, նախօրոք կազմել ծրագիր, նախաբան, ընթացք և վերջ, նշել մի քանի կարևոր կետեր, որոնց շուրջ պիտի դառնա խոսքը, մտապահել դրանք և ապա ազատորեն խոսել, այսպիսի թույլենքներն, երբեմն խոսքի բերումով ստեղծվում են այնպիսի հրաշալի նախադասություններ և ծրվում են հոյակապ մտքեր, որոնք սեղանի մոտ նստած երևի երբեք չստեղծվեին: Ինչ խոսք, ամեն մարդ ազատ է իր նախասիրած ձևի մեջ, պայմանով, որ կենդանի խոսքը չամիսնա և չմեռնի:

Ձայնի գեղեցիկ տեմբրը, ելևեջները, բացականչական, զարմացական և հիացմունքի շեշտերը գունեղ և շեշտակի են դարձնում քարոզչի խոսքը, ի դեպ, առանց տարակուսի պետք է ասել, որ շատ հաճախ քարոզի ժամանակ չլրող աղմուկը հետևանք է հենց իր՝ քարոզչի անհարակության և անկարողության:

Որպեսզի քարոզը ավելի հետաքրքիր դառնա, և ունկնդրի հետ կապը սերտանա, կան բազմաթիվ գեղեցիկ միջոցներ և արտահայտչաձևեր, դրանցից մեկ-երկուսը ես միայն կասեմ, որոնց գործածությունը նախընտրելի էր:

Նախ քարոզիչը պետք է զգա և շնչի ժողովրդի հետ, ոգևորվի և կասկածներ հարուցանի, հարցեր առաջադրի, ժխտի և հաստատի նորից ժողովրդի հետ, ժողովրդի կողմից: Նա պետք է համոզմունք ներշնչի, լարի զգացմունքները, շարժելով տեղից բնած հոգիները, բարեպաշտական բացականչությունները և ավելորդ ցուցերը, լուրաբանչյուր խոսքի սկզբում «Տեղ մեր Հիսուս Բրիստոս» կրկնելը աննպատակ է և տաղտկալի, նամանավանդ, երբ քարոզիչը շատախոսում է և անընդհատ խրատում հավատացյալներին, շատ շուտով բոլորին սկսում է ձանձրացնել, հոգնեցուցիչ է նման մարդուն լսելը:

Հակադրությունները նույնպես գայիս են բանավոր խոսքը ավելի գունագեղ դարձնելու և շեշտելու: Խոսելիս աշխատեցեք կերպարների և երևույթների հակադրում ստեղծել: Օրինակ՝ եթե խոսում եք Պետրոսի ուրախության կամ Հուդայի մատնության մասին, ապա աշխատեցեք նրա կողքին դնելու Հիսուսի ազնվության, մեծ սիրո և խոնարհության գեղեցիկ օրինակները, որպեսզի

մատնության և ուրացության գեղարվեստական գույները ավելի խոսնան, և ձեր խոսքը նստի, ինչպես ասում են, հոգու մեջ:

Կա նաև համոզվածության կարևոր ազդակը, եթե քարոզիչը չի համոզված իր ասածին, պետք չէ որ խոսի, արև կհնչի կեղծ և նրա բոլոր արտահայտությունները կլինեն խաբուսիկ, ինչպես մարդու դեմքը ծուռ հայելու մեջ: Ուրեմն քարոզիչը նախ ամեն ինչում ինքը իրեն պետք է համոզի, և ապա բեմ քարձրանա, և հետո, երբեք չվախենա ճշմարտությունը ասելուց. երբ զոհում եք ճշմարտությունը, ապա նշանակում է ամենից առաջ զոհվում եք դուք և ձեր խոսքը և ձեր նվիրական նպատակը, ձեզ ոչ ոք չի լսի, և դուք կտապալվեք:

Քարոզելու երկու հետաքրքիր ձևեր և սկզբունքային խնդիրներ կան:

Նախ լսարանի մասին:

Այսօրվա մեր եկեղեցիները աչքի են ընկնում հավատացյալների խայտադղեղությունով: Հավատացյալները ասոր ամենատարբեր զարգացման, ամենատարբեր գիտակցականության տեղ են:

Նրանց մի մասը տարրական գաղափար չունի կրոնի մասին ընդհանրապես կամ իմացածները կզկտուր տեղեկություններ են: Սակայն այդպիսիների կողքին մեր եկեղեցիներում կան կանգնած շատեր, որոնք բացի կրթական բարձր մակարդակից, հիանալի գիտեն Հիմ և Նոր ուխտը, հայ եկեղեցու անցյալն ու ներկան. ալսպիսով երկու մակարդակի հավատացյալներ կան. ինչպե՞ս պետք է կազմակերպի իր խոսքը քարոզիչը, ինչպե՞ս պետք է մոտենա նա լսարանին:

Մեկ մասը նախընտրում է խոսել պարզունակ, հասկանալի լեզվով, առանց գեղեցիկ բառերի ընտրության, կամա-կամաց մոտենալով ժողովրդի մակարդակին, նրա իմաստաստության և տրամաբանության աստիճանին, մեկ առ մեկ պատմելով Ավետարանի արագ արատությունները, նույնքան պարզունակ հետևություններով և վերունծություններով. առանց փոփոխական համեմատությունների, առանց գույների խոստման:

Ոմանք էլ նախընտրում են երբեք չհանել լսարանի արագունակ մտքերի մակարդակին, այլ իրենց խոսքը հազգեցնելով փոփոխական հետևություններով, տոմարաբանությամբ բարձր և նույն իմաստաստության, գեղեցիկ ու հարուստ ոճով մատուցում են իրենց խոսքը, թեև ուս հենց ամ մի քանի տասնյակ հավատաստանների համար, որոնք հասկանում են, հիանում և գնահատում նրան:

Սրանք մի հետևություն ունեն. այն է՝ չիջ-

նել ժողովրդի ներքին խափն աստիճանին, այլ նրան բարձրացնել-հասցնել եկեղեցական ամբիոնին:

Առաջինների կատարած գործը, ինչ խոսք, օգտավետ է և ժողովրդանվեր, բայց այն մոտենում է կիրակնօրյա դպրոցների մակարդակին և ունկնդիրների մի մասի համար ձանձրալի է:

Անձամբ ես կողմնակից եմ երկրորդ խմբին, այն է՝ ամեն օր, ամեն ժամ աշխատել զարգացնելու, ազնվացնելու մարդու հոգին, վարժեցնելու նրան գեղեցիկ խոսքի հաճույքը վայելելուն և հասկանալուն: Կրթել ճաշակը: Սա դժվարին մարզանք է, պետք է մարզել մարդկանց գեղեցիկի և ազնիվի կրթանքով: Քարոզչին հանձնարարելի է, որքան կարելի է քիչ օգտվել նշանավոր քարոզիչների քարոզներից, ուրիշի գեղեցիկ մտքերը, գյուտերը յուրացնել և տալ որպես իրենը՝ ես կասեի կես գողության նման մի բան է: Բառացի մեջբերումների ժամանակ հիշատակել հեղինակին և աստիճանաբար յուրովի զարգացնել այն: Իսկ ամենալավը ինքնուրույն աշխատելն է, սեփական մղտքերի շարահյուսման հաճույքը ունենալ, որը և արժանապատվության, ինքնախոստանության կնիքն է դնում մարդու վրա:

Քարոզի նպատակը

Քրիստոսի Ավետարանը անապատելի է, նրա ամեն մի տողի միջից թրթռում է մարդկային կյանքը բոլոր ժամանակների համար թարմ ու ստորյա:

Մարդը, հազարամյակներ անցնելուց հետո, այսօր՝ 20-րդ դարում, մեծագույն հայտնագործությունների, գիտության և տեխնիկայի ապշեցուցիչ նվաճումների ժամանակներում, ես կասեի մնացել է նույնը հիմնականում, իր հոգու բարդությամբ, իր հույզերով, իր կրքերով, իր հոգու վեհությամբ և ճղճիմությամբ, իր հերոսությամբ և մանրհոգի անկումներով, այսինքն իր ողջ հակասականությամբ:

Բոլորը ձգտում են մարդը գրել մեծատառով, մարդուն տեսնել վեհ, մաքրված, սրբված իր հոգու աթոռներից: Մեր իդեալն է կատարյալ մարդը, որ անշահախնդիր սիրի իր ընկերոջը, որը կարողանա ամոքել իր նմանի վիշտը: Մարդ, որը ոչ միայն կարողանա ասել, որ ինքը իր ամբողջ կյանքում ապրել է անարատ ու անքիժ, այլև կարողանա ցույց տալ, թե ինչ լավ և գեղեցիկ բան է արել ուրիշի համար, իր նմանի համար:

Մեր բոլորիս երազանքն է՝ տեսնել մարդկությունը խաղաղ ու երջանիկ, կատարյալ ու վեհ: Կատարելության այս դժվարին ճանփան անցնելու համար մարդուն ամենից առաջ հարկավոր է ինքնաճանաչություն, ինք-

նահասկացողություն, ինքնատեսողականություն, որը կոչվում է նաև ինքնահայեցողություն:

Տեսնել ինքն իրեն, անջատվել իր եսից մի պահ և նայել իրեն, տեսնել հոգու վայրիվերումները, սուզվել իր հոգու անհատակ խորությունների մեջ, զննել ամեն բան և տեսնել ամեն ինչ և միայն տեսնելուց հետո է, որ մարդ անհատը պիտի կարողանա իր վրա կամքի ուժ գործադրելով դուրս մղել իրենից հոգու կուտակված աղբը, որ է տմարդություն, փոքրգություն, նախանձ, չարություն, քեն և ազափություն:

Ուրեմն քարոզիչը ամենից առաջ խոր հոգեբան պետք է լինի, որպեսզի խորանալով մարդկային հոգուց ներս, վերլուծել կարողանա մարդու ներքին հակասությունները, ձգտումները և ի վերջո կարողանա ամենաանհույս և կործանված անհատի մեջ տեսնել հույսի մի շող, չարատավորված մի անկյուն, ճակատագրական մի կետ, որտեղից սկսեք մարդուն փրկագործելու իր մեծ գործը:

Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան»-ը ինքնաճանաչության և ինքնահայեցողության ամենալավագույն դասագիրքն է: Առանց իր ներքին ինքնատեսության, Նարեկացին երբեք չպետք է ունենար երազանքը Աստծուն միանալու հավերժության և հավիտենականության մեջ, «Շղնչոյս ողջոյնի կապեալ ընդ շնորհիւ, ի քեզ միանալ անբաժանելի» (բան ԻԴ) կամ «Ի քեզ, Տէր, անկայց՝ միացեալ իսպառ անբաժանելի...» (բան ԶԵ):

Ամեն մարդ ինքն իրեն ճանաչելով, անկախ միջավայրից և պայմաններից, կարող է ինքնակատարելագործվել և հասնել «Կատարյալին»։ այստեղ նրան օգնության է գալիս եկեղեցին, որը ցույց է տալիս կատարելության ճշմարիտ ճանապարհը: «Ես եմ ճանապարհն և ճշմարտութիւնն և կեանք» (Յով. ԺԴ 6):

Ահա այս ճշմարտության ճանապարհն է, որ քարոզիչ հոգևորականը պետք է ցույց տա հավատացյալներին, նա պիտի օգնի, որ նրանք իրար լավ ճանաչեն, և ինքը նախ ճանաչի նրանց:

Շիյները իր բանաստեղծություններից մեկում գրել է. «Ուզո՞ւմ ես քեզ ուսումնասիրել, նայիր մարդկանց և նրանց գործերին: Ուզո՞ւմ ես մարդկանց ուսումնասիրել, քո սրբոսի մեջ հայացք նետիր»:

Մարդուն ճանաչելու և նրան ճանաչեցնելու քարոզ գործն է, որ պիտի դառնա քարոզչի նպատակներից մեկը և իր խոսքի առանցքը:

Ինքնաճանաչողության հարցը հին է, դեռևս Քրիստոսից շատ առաջ Մեծ Սոկրատը

ասել էր աշխարհին իր իմաստնագույն խոսքը՝ «Ծանիր գքեզ», քրիստոնեությունը եկավ այն հիմնավորելու և կոնկրետացնելու:

Ոչ միայն մարդիկ են, որ պիտի իրար ճանաչեն և սիրեն, այլ ազգեր, ժողովուրդներ, երկրներ: Աշխարհի ժողովուրդների միմյանց ճանաչողությունից է կախված հենց այդ ժողովուրդների բախտն ու ապագան, աշխարհի տևական, իսկական խաղաղությունը:

Ծանաչել մարդկանց և ճանաչել տալ նրանց իրար—ահա քարոզիչ քահանայի նվիրյալ գործը, հայ հոգևորականի ուխտը:

Մարդկանց իրար ճանաչելու համընդհանուր հասկացողության և փոխըմբռնման ամուր խարիսխ է Քրիստոսի ս. Ավետարանը: Ավետարանի գաղափարների իրականացումով բոլոր մարդիկ դառնում են եղբայրներ ի Քրիստոս:

Այդ գաղափարների իրականացման անձնավեր զինվորը ինքը՝ հայ հոգևորականն է իր խոսքով, իր գրչով և իր կենդանի կյանքով, այդ՝ կյանքով: Քրիստոս ամենից առաջ քարոզում էր իր կյանքով, իր ապրած հրաշալի կյանքով, նրա քարոզած վարդապետությունը իր իսկ ապրած կյանքն էր: Նրա անհատնում այրվող կյանքը «էր լոյսն ճշմարիտ, որ լուսատու առնէ զամենայն մարդ»

որ զայոց է աշխարհ» (Յով. Ա 9), ինքնին վեր էր ամեն մի քարոզից, այն կենդանի քարոզն ու օրինակն էր:

Այս նույն օրինակով քահանայի քարոզն ու իր ապրած կյանքը նույնը պիտի լինի: Նա իր կյանքով, մաքուր, հավատավոր կենցաղով օրինակ պիտի ծառայի ժողովրդին:

Քահանան եթե կեղծում է իրեն և ունի երկդիմի կենցաղ, այլ է հավատացյալներին քարոզելիս և այլ՝ դրսում, այդ քահանան նախ խաբում է իրեն և անկարելի է, որ նա ինչ-որ ճշմարտության մեջ համոզի ուրիշին, և իզուր չէ, որ քահանա ձեռնադրելիս եպիսկոպոսը Մաշտոցում կարդում է և խրատում ձեռնադրվողին՝ «Կեանք քո և վարք քո լիցին օրինակ ժողովրդեան»՝ որք են սուրբ հաւատով ի Քրիստոս: Որպես զի տեսցեն գքեզ գործել զայն...»:

Ահա թե որովք են քարոզչի մտահոգությունները, նրա նյութը, աշխատանքը, նրա սուրբ նպատակը, նպատակը իրականացնելու միջոցները, կերպերը և քարոզչական այլ պարտականությունների հետ միասին վերցրած ընդհանրապես և նրա կյանքը՝ ապրած և ապրելիք:

ՌՈՒԲԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

